

## **ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2020 ԹՎԱԿԱՆԻ՝ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ**

2020 թվականին Գավառի համայնքապետարանը ՀՀ Կառավարության հաստատմանն է ներկայացրել համայնքի տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված ծրագրեր. դրանք ներառում են ճանապարհաշինություն, լուսավորության, տարեցների ու փոքրիկների խաղարանների կառուցման, այգիների ու պուրակների հիմնանորոգման ու բարեկարգման, մանկապարտեզների և մշակութային հաստատությունների նորոգման աշխատանքներ: Սուբվենցիոն ծրագրերը հաստատվել են Կառավարության կողմից:

2020 թվականին Գավառում կիրականացվեն համայնքի տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված սուբվենցիոն հետևյալ ծրագրերը.

### **Գավառի թիվ 8 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում:**

Մանակապարտեզը գտնվում է Արծվաքար թաղամասում: Գործում է 3 խումբ՝ 85 երեխաներով: Նախորդ տարիներին մանկապարտեզի շենքը մասնակի հիմնանորոգվել է. փոխվել է շենքի տանիքը, հիմնանորոգվել են խմբասենյակներ, դահլիճը և ճաշարանը, անցկացվել է ջեռուցման համակարգ:

Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել շենքի մնացած հատվածը, կառուցել ցանկապատ, անցկացնել կոյուղագիծ, ստեղծել դրենաժային համակարգ և բարձրացնել շենքի սեյսմիկությունը:

Ծրագրի արժեքը կազմում է 101 մլն 385 հազ. դրամ, պետական բյուջեից հատկացվելու է ընդհանուր գումարի 65 տոկոսը, որը կազմում է 65 մլն 900 հազար դրամ, իսկ 35 մլն 485 հազար դրամը, կամ 35 տոկոսը հատկացվելու է Գավառ համայնքի բյուջեից:

### **Գավառի Բուռնազյան փողոցի Կապիտալ վերանորոգում:**

Գտնվում է Գավառի Հացառատ թաղամասում: Չի հիմնանորոգվել ԽՍՀՄ փլուզումից հետո: Շուրջ 30 տարի անց փողոցը կունենա նրբլորովին այլ տեսք: Փողոցի վրա են գտնվում թաղամասի մանկապարտեզի եւ թիվ 2 միջնկարգ դպրոցի շենքերը, ինչպես նաեւ Գավառի ավտոդպրոցի շենքը:

Նախատեսվում է ասֆալտապատել Հենրիկ Աբրահամյան Բուռնազյան փողոցների խաչմերուկից սկսած մոտ 800 գծամետր հատվածը՝ մինչեւ Բուռնազյան 2-րդ փողոցի խաչմերուկ: Տեղադրվելու են մայթերի եզրաքարեր եւ ջրահեռացման վաքեր:

Ծրագրի արժեքը կազմում է 224 մլն դրամ, պետական բյուջեից հատկացվելու է գումարի 60 տոկոսը, իսկ համայնքի բյուջեից 40 տոկոսը:

60 տոկոս 134 400 000 կառավարություն

40 տոկոս 89 600 000 համայնք

### **Գավառի Կարեյան, Բարեկամության, Պետրովի, Ղամարյան Եղբայրների, Կահիրեի, Գրիգոր Նարեկացու փողոցներում եւ Ազատության փողոց 2-րդ նրբանցքում լուսավորության արտաքին ցանցերի կառուցում, Կենտրոնական Հրապարակի լուսասյունների տեղափոխություն:**

Այս փողոցների վրա առկա են համայնքային, պետական կազմակերպություններ, եւ շուրջ 1300 առանձնատներ, որոնց ընդհանուր բնակչության թիվը կազմում է շուրջ 4500 մարդ: Տեղադրվելու են լուսասյուններ եւ մոտ 171 լեդ լուսատուներ:

Հիմնանորոգումից հետո համայնքը կունենա ժամանակակից չափորոշիչների համապատասխան, ամբողջական, լուսավորված եւ անվտանգ փողոցներ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 38 մլն 704 հազ. դրամ: Համաֆինանսավորումը կատարվելու է պետություն՝ 60, համայնք՝ 40 տոկոս հարաբերակցությամբ:

60 տոկոս՝ 23 222 900 կառավարություն

40 տոկոս՝ 15 482 000 համայնք

***Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարակից փարածքի և Արծրունի Եղբայրների արձանի հարակից այգիների հիմնանորոգում և Հացառափ ու Արծվաքար թաղամասերում խաղարանների կառուցում:***

Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցու հարակից այգու հիմնանորոգում, գազոնների կառուցում, սալիկապատում եւ սալուղիների կառուցում: Այն իր առանձնահատկությունն ունի, գտնվում է եկեղեցու հարակից եւ Գավառի ամենակենտրոնական հատվածում: Այստեղ է տեղակայված Եղեռնի զոհերի հուշահամալիրը:

Արծրունի Եղբայրների արձանի հարակից այգին էլ ունի իր առանձնահատկությունը, այն նույնպես գտնվում է Գավառի կենտրոնական հատվածում, Անձնագիր հուշապատի եւ Գավառի թատրոնի հարեանությամբ: Այգում նախատեսված է տեղադրել Գավառ քաղաքի հիմնադիր եղբայրների՝ Արծրունիների արձանախումբը, որն համարվում է համայնքի խորհրդանիշներից մեկը:

Իրականացվող աշխատանքները համայնքը կլուծեն քաղաքի եւ ճարտարապետական, համայնքի գեղագիտական եւ համայնքի բնակիչների ժամանցի կազմակերպման, եւ ինչ որ չափով զբոսաշրջիկների հարավման խնդիրներ:

Իսկ խաղարանների կառուցման արդյունքում կլուծվի այս թաղամասերում մեծահասակների եւ տարեցների ժամանցի կազմակերպման խնդիրները:

Ծրագրի արժեքը կազմում է 32 մլն 838 հազար դրամ: Համայնքի ներդրումը կազմում է շուրջ 18 մլն, պետական բյուջեից 14 մլն. դրամ: Այս ծրագրով պետություն- համայնք ֆինանսավորման հարաբերակցությունը կազմում է 55-45 տոկոս:

***Մշակույթի փան շենքի մի հատվածի հիմնանորոգում և շենքի դիմային հատվածի ապակիների փոխարինում:***

Վերջին մի քանի տարվա ընթացքում շենքում կատարվել են մասնակի վերանորոգումներ, սակայն շենքում դեռ կան չվերանորոգված հատվածներ:

Հիմնանորոգման ընթացքում իրականացվելու է շենքի դիմային հատվածի ապակիների ամբողջական փոխարինում, շենքի ձախակողմյան մասնաշենքի ամբողջական հիմնանորոգում, դահլիճի հանդերձարանների եւ սանհանգույցի հիմնանորոգում, ներքին էլեկտրական լուսավորության ցանցի փոխարինում, պատերի եւ առաստաղի ներկում, լամինատե հատակի իրականացում:

Հիմնանորոգումից հետո համայնքը կունենա ժամանակակից չափորոշիչներին համապատասխան մշակույթի շենք, ինչի շնորհիվ կակտիվանա քաղաքի մշակութային կյանքը:

Ծրագրի արժեքը 38 մլն 111 հազար դրամ է: Համայնքի բյուջեից հատկացվելու է 21 մլն 961 հազար դրամ, որը կազմում է ընդհանուր գումարի 55 տոկոսը, պետական բյուջեից հատկացվելու է 17 մլն դրամ կամ ընդհանուր գումարի 45 տոկոսը:

### **Քավառում 6 կանգառների կառուցում:**

Համայնքում բացակայում են տեղակայված կանգառները, որը տարբեր պայմաններում դժվարություններ եւ խնդիրներ է ստեղծում համայնքի բնակչության համար:

Տեղադրելով կանգառներ կբարելավվի համայնքի երթեւեկության ցանցի և կլավանա բնակչությանը սպասարկվող տրանսպորտային ծառայությունների որակները:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 32 մլն 400հազ. դրամ, համայնքի ներդրումը կազմում է 17 մլն 820 հազար դրամ, կամ ընդհանուր գումարի 55 տոկոսը, պետության ներդրումը 45 տոկոս է, որը կազմում է 14 մլն 580 հազար դրամ:

### **Կենտրոնական Հրապարակի շատրվանային համակարգի վերակառուցում:**

Հրապարակի համաշինարարական աշխատանքները ավարտվել են, 2018 թվականին տեղադրվել են նախագծով նախատեսված լուսասյուներ, նստարանները, աղբամանները եւ ժամացույցը, հրապարակի ավարտուն տեսք ունենալու համար անհրաժեշտ է վերակառուցել նաեւ շատրվանային համակարգը:

Առաջարկվող շատրվանային համակարգն իրենից ներկայացնում է 70 մետր երկարությամբ եւ 7 մետր լայնությամբ 0,6 մետր խորությամբ, ուղղանկյունաձեւ լողավազան, որի միջին հատվածով, մեկ գծով, ուղղաձիգ տեղակայված կլինեն 70 հատ ցածր լարման թվային կառավարումով պոմպեր, եւ 70 հատ ցածր լարման տեսակի թվային կառավարումով լուսատու, որոնց միջոցով հնարավոր է ստանալ բազմաթիվ, տարատեսակ ջրային եւ լուսային միմյանց հետ համակցվող եւ համակարգվող էֆեկտներ:

Հրապարակի վերակառուցումը կնպաստի համայնքում զբոսաշրջության ակտիվացմանը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 86 մլն. դրամ: Համայնքի բյուջեից նախատեսվում է 47.300-ի ներդրում, որը կազմում է 55 տոկոս, մնացած 45 տոկոսը կամ 38 մլն 700 հազարը հատկացնելու է պետությունը:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագիրը համայնք-պետություն համագործակցության լավագույն արդյունքն են, որը զգալիորեն բարելավում է նաեւ համայնքների սոցիալտնտեսական վիճակը: